Հատուկ պարգև

«Սա պետք է որ Սուրբ Հոգին լինի», - մտածեց Մեհրիման:

Գրեթչեն Փիքլեզայմեր Քիննի
(Հիմնված է իրական պատմության վրա)
Այս պատմությունը տեղի է ունեցել Ֆրանսիայում:

«Մեհրիմա: Ֆաթիմա: Միսիոներներն այստեղ են», - կանչեց մայրը:

Մեհրիման փակեց սուրբ գրությունների պատմությունների գիրքը և վազեց հյուրասենյակ: Միսոներներն ուսուցանում էին նրանց ընտանիքին Հիսուս Քրիստոսի մասին: Մեհրիման և նրա ընտանիքը պատրաստվում էին շուտով մկրտվել: Նա անհամբեր սպասում էր այդ օրվան:

Մեհրիման նստեց իր ընտանիքի հետ:

«Այսօր մենք խոսելու ենք Սուրբ Հոգու մասին», - ասաց Երեց Մոյին: «Նա օգնում է մեզ խաղաղություն և մխիթարություն զգալ Երկնային Հոր կողմից»:

«Նա նաև խրախուսում է մեզ լավ գործեր կատարել», - ավելացրեց Երեց Քեմբելը: «Եվ Նա օգնում է մեզ իմանալ, թե ինչն է ճշմարիտ: Դուք հավանաբար նախկինում զգացել եք Սուրբ Հոգին»:

Մեհրիման վերհիշեց այն պահը, երբ իմացավ Մորմոնի Գրքի մասին: Նա իրեն խաղաղ ու երջանիկ էր զգում: Այդպիսով նա գիտեր, որ այն ճշմարիտ է: Արդյո՞ք դա Սուրբ Հոգին էր:

«Ձեր մկրտվելուց հետո ձեզ կտրվի Սուրբ Հոգու պարգևը», - ասաց Երեց Մոյին: «Դա նշանակում է, որ Նա կարող է *միշտ* ձեզ հետ լինել, օգնել և առաջնորդել ձեզ»:

«Այս շաբաթ ուշադրություն դարձրեք ձեր մտքերին և զգացողություններին», - ասաց Երեց Քեմբելը: «Ուշադիր եղեք, երբ Սուրբ Հոգին խոսում է ձեզ հետ»:

Այդ երեկո ընտանեկան աղոթքի ժամանակ Մեհրիման ուշադրություն դարձրեց, թե ինչ է զգում ներքուստ: Նա իրեն հանգիստ և խաղաղ էր զգում: Այնպիսի զգացողություն էր, կարծես մեկը ամուր գրկում էր իրեն: *Սա պետք է որ Սուրբ Հոգին լինի*, մտածեց նա:

Կիրակի օրը եկեղեցում Մեհրիման երգ լսեց Հիսուս Քրիստոսի մասին: Նա երջանիկ էր: Այն ցանկություն առաջացրեց նրա մեջ օգնել ուրիշներին: *Սա պետք է որ Սուրբ Հոգին լինի*, մտածեց նա:

Քնելուց առաջ Մեհրիման կարդաց սուրբ գրությունների պատմությունների գիրքը: Նրա քույրը՝ Ֆաթիման, սպասում էր իր հերթին: Մեհրիման նրան հերթ չէր տալիս:

Նա շարունակում էր կարդալ: Սակայն նա իրեն վատ զգաց, որ չզիջեց քրոջը:

«Կներես»,- ասաց նա Ֆաթիմային: «Ուզո՞ւմ ես միասին կարդանք»:

Ֆաթիման նստեց նրա կողքին: Նրանք հերթով կարդում էին: Մեհրիման ջերմ զգացողություն ունեցավ . նա երջանիկ էր: *Սա պետք է որ Սուրբ Հոգին լինի*, մտածեց նա:

Վերջապես եկավ նրանց մկրտության օրը: Մեհրիման և իր ընտանիքը գնացին Եկեղեցի և հագան սպիտակ հագուստներ:

Մեհրիման առաջինը մկրտվեց: Ջուրը սառն էր, բայց նա ուրախ էր Երկնային Հոր հետ ուխտ կապելու համար: Մայրիկը սրբիչով փաթաթեց նրան: Հետո նա տեսավ, թե ինչպես են մայրիկը, հայրիկը և Ֆաթիման մկրտվում:

Մեհրիման նորից հագավ իր չոր հագուստը: Հիմա ժամանակն էր, որ նա հաստատվեր:

Միսիոներներն իրենց ձեռքերը դրեցին Մեհրիմայի գլխին: «Մենք քեզ հաստատում ենք որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ», - ասաց Երեց Քեմբելը, - «և ասում ենք քեզ՝ ընդունիր Սուրբ Հոգին»: Մեհրիման պարուրվեց ջերմությամբ, երբ լսեց օրհնության մնացած մասը:

Մեհրիմայի հաստատումից հետո մայրիկը գրկեց նրան: «Ինչպե՞ս ես»:

«Շատ լավ»,- ասաց Մեհրիման: «Երբ նրանք ձեռքերը դրեցին գլխիս, ես ինչ-որ բան զգացի և դա խաղաղություն էր»: Նա ժպտաց: «Զգում էի, որ ինչ-որ մեկն ինձ ասում էր՝ ապրիր լավ կյանքով, օգնիր մարդկանց և պահիր պատվիրանները»:

«Գիտե՞ս, թե ինչ էիր զգում», - հարցրեց մայրիկը:

«Այո, գիտեմ», - ասաց Մեհրիման՝ փայլող աչքերով: «Դա Սուրբ Հոգին էր»: ●



ԴԱՐՆԵՐԸ՝ ԱԼԻՍՍԱ ՖԻՔԵՐՈՆԻ

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

Սուրբ Հոգին երբեմն կոչվում է նաև «Հոգի»: Նա մեզ ուղերձներ է բերում Երկնային Հորից և Հիսուս Քրիստոսից: Նա մխիթարում է մեզ և սովորեցնում, թե ինչպես ճիշտ ընտրություն կատարել: (Տես Վարդապետություն և Ուխտեր 79 . 2:) Բացեք էջ 21-ը, որպեսզի սովորեք որոշ ուղիների մասին, որոնցով մենք կարող ենք լսել Նրա ձայնը: